ՀՀ աշխատաշուկան և գործազրկությունը

Ղազարյան Ռ. Ա.
Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան (Երևան, Հայաստան)
Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի մագիստրանտ
rom.ghazaryan96@gmail.com

Վճռորոշ բառեր՝ աշխատանքային ռեսուրսներ, տնտեսապես (ոչ) ակտիվ բնակչություն, զբաղվածներ, գործազուրկներ, զբաղվածության և գործազրկության մակարդակներ

Рынок труда и безработица в Республике Армения

Казарян Р. А.
Армянский государственный экономический университет (Армения, Ереван)
rom.ghazaryan96@gmail.com

Резюме: Данная работа посвящена анализу основных показателей рынка труда Армении, таких как трудовые ресурсы, экономически активное и неактивное население, количество занятых и безработных, а также уровни экономической активности, занятости и безработицы. Из работы становится ясно, что количество трудовых ресурсов в Армении резко сократилось за последнее десятилетие, и главной причиной является продолжающаяся эмиграция. Более половины работающего населения в Армении занято в сфере услуг. А уровень безработицы продолжает оставаться самым высоким в столице.
Ключевые слова: Трудовые ресурсы, экономически активное и неактивное население, занятые, безработные, уровни занятости и безработицы

Labour market and unemployment in the Republic of Armenia

Ghazaryan R. A.
Armenian state university of economics (Armenia, Yerevan)
rom.ghazaryan96@gmail.com

Abstract: This paper is dedicated to the analysis of key indicators of the Armenian labor market, such as labor resources, the economically active and inactive population, the number of employed and unemployed, as well as economic activity, employment and unemployment rates. It becomes clear from this paper that the number of labor resources in Armenia has declined sharply over the last decade, the main reason for which is ongoing emigration. Over half of the working population in Armenia is engaged in the service sector. And the unemployment rate remains the highest in the capital city.
Keywords: Labour resources, economically active and inactive population, employed and unemployed persons, employment and unemployment rates

Աշխատանքում ներկայացվել և վերլուծվել են աշխատաշուկայի հիմնական ցուցանիշները՝ աշխատանքային ռեսուրսներ, տընտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչություն, զբաղվածներ և գործազուրկներ, զբաղվածության և գործազրկության մակարդակներ: Աշխատաշուկայի վերլուծության համար հիմք են հանդիսացել հիմնականում ՀՀ ՎԿ-ի կողմից ներկայացվող պաշտոնական վիճակագրությունը [**1**], ինչպես նաև ՏԶՀԿ-ի կողմից մշակված և հրապարակված «Հայաստանի տնտեսական զեկույց 2015 և 2016»-ը [**2**, **3**]:

Հայաստանում աշխատանքային ռեսուրսների թիվը 2017թ. նախորդ տարվա նկատմամբ աճ է գրանցել, ինչը կարելի է ասել աննախադեպ է 2009թ.-ից ի վեր: Այդ աճը գրեթե հավասարապես է բաշխվել տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչությունների միջև: Տնտեսապես ակտիվ բնակչության աճը հանգեցրել է զբաղվածների թվի աճին, իսկ գործազուրկների թիվը նվազել է: Սա բավականին լավ ազդակ է, քանի որ վերջին տասը տարիների ընթացքում ինչպես աշխատանքային ռեսուրսներում տնտեսապես ակտիվ բնակչությունն էր նվազում, այնպես էլ վերջինում զբաղվածների թիվը: Իհարկե տեղի ունեցած աճը մեծ չէ, սակայն խոստումնալից է ապագայի համար (Աղյուսակ 1):

Ըստ զբաղվածության մասին ՀՀ օրենքի՝ զբաղվածություն համարվող գործունեության տեսակներն են [**4**].

Աղյուսակ 1. Աշխատանքային ռեսուրսների կազմը (1000 մարդ)

	Աշխատանքային ռեսուրսներ	Տնտեսապես ակտիվ բնակչություն	Զբաղվածներ	Գործազուրկներ	Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն
2008	2 376.90	1 414.60	1 183.10	231.6	962.3
2009	2 397.60	1 418.80	1 152.80	265.9	978.9
2010	2 389.70	1 463.30	1 185.20	278.2	926.3
2011	2 286.30	1 440.90	1 175.10	265.7	845.4
2012	2 260.80	1 418.30	1 172.80	245.5	842.5
2013	2 189.10	1 388.40	1 163.80	224.6	800.7
2014	2 180.20	1 375.70	1 133.50	242.1	804.5
2015	2 106.60	1 316.40	1 072.60	243.7	790.3
2016	2 011.40	1 226.30	1 006.20	220.2	785.1
2017	2 021.30	1 230.70	1 011.70	219	790.6

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ հաշվարկներ

Գծապատկեր 1. Զբաղվածության մակարդակը և զբաղվածների թվաքանակը Հայաստանում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ հաշվարկներ

- գործատուների մոտ վարձու աշխատանքային գործունեությունը (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված ծառայությունների կադրերի ռեզերվում գտնվելը, բացառությամբ վարձատրություն չնախատեսող դեպքերի),
- քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների կատարումը.
- անհատ ձեռնարկատիրական և նոտարի գործունեությունը.
- արտոնագրային վճար վճարողի գործունեությունը.
- ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը.
- ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցումը:

Երկրում զբաղվածության մակարդակի ցուցանիշը 2009-2013թթ. անընդհատ աճել է, սակայն դա պայմանավորված է եղել աշխատանքային ռեսուրսների կրճատմամբ: 2013-2016թթ. այս ցուցանիշը սկսել է նվազել՝ ուղեկցվելով զբաղված բնակչության թվաքանակի կտրուկ անկմամբ: Իսկ ահա 2017թ. այն աճել է 0.1 տոկոսային կետով:

Գյուղատնտեսության մեջ զբաղվածների թիվը տարեց տարի նվազում է, ընդ որում բավականին արագ տեմպերով, ինչի պատճառն իհարկե այն է, որ գյուղական շրջաններից ար-

Աղյուսակ 2. Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության, %

	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Շինարարություն	Ծառայություններ	Ընդամենը
2008	37.6	11.0	8.9	42.5	100
2009	39.5	9.9	7.1	43.5	100
2010	38.6	10.2	7.2	44.0	100
2011	38.9	11.0	5.7	44.4	100
2012	37.3	11.8	5.9	45.0	100
2013	36.2	11.3	5.7	46.7	100
2014	34.8	11.6	5.2	48.5	100
2015	35.3	11.3	4.7	48.8	100
2016	33.6	12.1	3.7	50.6	100
2017	31.3	13.1	3.7	51.9	100

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ հաշվարկներ

Աղյուսակ 3. 15-29 տարեկան աշխատանքային ռեսուրսների կազմը (1000 մարդ)

	Աշխատանքային ռեսուրսներ	Տնտեսապես ակտիվ բնակչություն	Զբաղվածներ	Գործազուրկներ	Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն
2008	837.3	349.3	246.9	102.4	488.1
2009	825.6	349.4	232.3	116.9	476.4
2010	829.9	365.9	248.3	117.6	463.9
2011	734.7	346.3	235.7	110.6	388.4
2012	719.5	335.5	236.9	98.7	383.9
2013	669.1	319.3	227.8	91.4	349.9
2014	682.4	334.4	236.3	98.1	348
2015	633.7	317.7	227.3	90.4	316.1
2016	568.2	265.1	191	74.1	303
2017	545.8	261.3	182.9	78.4	284.5

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ հաշվարկներ

տագաղթը շատ մեծ է: Եթե 2008-2012թթ. Գյուղատնտեսությամբ զբաղվածների կշիռը տատանվում էր 37-40%, ապա 2017թ. այն կազմել է ընդամենը 31.3%: Արդյունաբերության մեջ զբաղվածների թիվը վերջին 10 տարիների ընթացքում 2017թ. եղել է ամենամեծը, սակայն սա չի կարելի համարել լավ ցուցանիշ, որովհետև դրա հիմնական պատճառը եղել է Ամուլսարի հանքավայրը: Շինարարության ոլորտում զբաղվածների թիվը կայուն նվազում է, և 2017թ. զբաղվածների միայն 3.7%-ն է բաժին ընկել շինարարությանը: Իսկ ահա ծառայությունների ոլորտում զբաղվածների թիվը գնալով աճում է և 2016թ. արդեն անցել է 50%-ի շեմը: 2017թ. այս ցուցանիշը կազմել է 51.9%, այսինքն երկրում զբաղվածների կեսից ավելին զբաղված է ծառայությունների ոլորտում, ինչը իհարկե լավ չէ արդյունք ստեղծելու տեսանկյունից (աղյուսակ 2):

Չնայած այն բանի, որ աշխատանքային ռեսուրսների թիվն աճել է, 15-29 տարիքային խմբում այդ թիվը շարունակում է նվազել, ինչը բավականին անհանգստացնող է: 2008-2017 թթ. այն նվազել է շուրջ 34.8%-ով և կազմել 545.8 հազար մարդ: Այստեղ բացի նրանից, որ նվազել է տնտեսապես ակտիվ բնակչության թիվը, նվազել է նաև դրա կազմում զբաղվածների կշիռը (2017թ. գործազրկությունը կազմել է 30%) (աղյուսակ 3):

Ըստ գործազրկության մասին ՀՀ օրենքի՝ գործազուրկ են համարվում տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած՝

Գծապատկեր 2. Գործազրկության միտումները Հայաստանում 2008-2017թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ հաշվարկներ

Գծապատկեր 3. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի, 2017թ. (տոկոս)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ հաշվարկներ

Գծապատկեր 4. Գործազրկության մակարդակը քաղաքներում և գյուղերում (տոկոս)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ հաշվարկներ

աշխատանք փնտրող և եկամտաբեր գործունեության որևէ տեսակով չզբաղված անձինք, որոնք աշխատանք գտնելու նպատակով հաշվառված են լիազորված մարմնում, պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ [**4**]:

Հետճգնաժամային Հայաստանում գործազրկության մակարդակը 2010-2013թթ. նվազելով հասել էր 2008թ.-ի մակարդակին, որից հետո, սակայն, 2015թ. հասել էր 18.5%, որը մոտ էր ճգնաժամային տարիների ցուցանիշին: Վերջին 2 տարիներին այս ցուցանիշը

սկսել է կրկին նվազել և 2017թ. կազմել է 17.8% (գծ. 2):

2017թ. գործազրկության մակարդակը շարունակում է ամենաբարձրը լինել Երևանում. այն հասնում է մինչև 27.1%-ի: Մայրաքաղաքին հաջորդում են Շիրակի և Կոտայքի մարզերը՝ համապատասխանաբար 24.3 և 22.4 տոկոս: Մնացած բոլոր մարզերում գործազրկության մակարդակը միջինից ցածր է (գծ. 3):

Սակայն մարզային ցուցանիշներում ներառված են նաև գյուղական բնակչությունը, որոնց շրջանում գործազուրկների թվաքանակը համարվում է ցածր: Այդ պատճառով կդիտարկենք գործազրկության մակարդակները քաղաքային և գյուղական բնակչությունների համար (գծ. 4): Գործազրկությունը 2017թ. քաղաքներում նվազել է 1.4 տոկոսային կետով, իսկ գյուղերում շատ կտրուկ աճել է՝ հասնելով 7.4%-ի, ինչը վերջին 10 տարիների ամենաբարձր ցուցանիշն է: Այնուամենայնիվ գյուղերում գործազրկությունը շատ ցածր է (մոտ է բնական մակարդակին) քաղաքների համեմատությամբ, որովհետև այնտեղ բնակչությունը թերզբաղված է (հիմնականում զբաղված է գյուղատնտեսական գործունեությամբ):

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ՎԿ, «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում», վիճակագրական ժողովածու, Երևան, 2018թ.:
2. ՏԶՀԿ, «Սիրիահայերի տնտեսական ինտեգրումը Հայաստանում», Հայաստանի տնտեսական զեկույց 2016, նոյեմբեր, 2016թ.:
3. ՏԶՀԿ, «Հայ-վրացական տնտեսական համագործակցությունը», Հայաստանի տնտեսական զեկույց 2015, նոյեմբեր, 2015թ.:
4. ՀՀ օրենքը զբաղվածության մասին, ընդունված 2013թ.:

Сдана/Հանձնվել է՝ 25.10.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 1.11.2019
Принята/Ընդունվել է՝ 4.11.2019